Արձանագրություն N 3

ԾՔ-ԳՀԱՇՁԲ-18/8 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք.Ծաղկաձոր 16 մայիսի 2018թ.

ժամը 10:00

Մասնակցում էին հանձնաժողովի

նախագահ՝ Գ.Հայրապետյան

անդամ՝ Ն.Խաչատրյան

Վ.Հայրապետյան

Ա.Մեսրոպյան

Է.Հովհաննիսյան

քարտուղար՝ Ա.Ավետիսյան

Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ իր որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը գնահատելու և ՊԵԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը գնահատելու մասին

(Գ.Հայրապետյան)

Ընդունել ի գիտություն, որ՝

1. ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված ժամկետում <<Երևաննախագիծ>> ՓԲԸ-ն ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

2. Ընդունել ի գիտություն, որ

ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հարցում էր ներկայացվել ՀՀ ԿԱ Պետական Եկամուտների Կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ: Կոմիտեից ստացված եզրակացությամբ արձանագրվել է, որ <<Երևաննախագիծ>> ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների

գծով ունի օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ:

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 45-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մասնակցի տվյալները չներկայացնել լիազորված մարմին,եթե մասնակիցը 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնի լրացուցիչ տեղեկատվություն:

Հանձնաժողովը որոշեց մերժել ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին՝ **<<Երևաննախագիծ>> ՓԲԸ**-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

3. ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 48-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշեց առաջարկել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ <<Մեծ Մասրենի>> ՍՊԸ-ին, ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Գ.Հայրապետյան

անդամներ՝ _____ Ա.Մեսրոպյան

_____ Ն.Խաչատրյան

_____ Վ.Հայրապետյան

_____ Է.Հովհաննիսյան

քարտուղար՝ _____ Ա.Ավետիսյան